ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐ (ԳՐՔԵՐ, ԱՄՍԱԳՐԵՐ)

ԹԵ՛ ԿԱՐԴԱԼՈՒ, ԹԵ՛ ՀՈԴՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

INTERNATIONAL SCIENTIFIC INFORMATION RESOURCES (BOOKS, MAGAZINES)
AVAILABLE FOR FREE TO
YEREVAN HAYBUSAK UNIVERSITY
WITH THE POSSIBILITY OF
BOTH READING AND PUBLISHING ARTICLES

Որպես Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի (DLAA) անդամ՝ EIFL-ի հետ համագործակցության շրջանակում Երևանի «Հայբուսակ» համալսարանին ԱՆՎՃԱՐ հասանելի են միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտական շտեմարանները:

Հասանելի ռեսուրսներն ու հնարավորությունները.

Միջազգային գիտական շտեմարաններ. Անսահմանափակ հասանելիություն աշխարհի առաջատար գիտական ամսագրերին, հոդվածներին և մասնագիտական գրականությանը:

Արտոնություններ հրատարակման համար. Հոդվածների հրատարակման վճարի լրիվ փոխհատուցում կամ զեղչեր (APC waivers/discounts) այնպիսի հեղինակավոր հրատարակչություններում, ինչպիսիք են՝ *Oxford University Press*, *Cambridge University Press*, *SAGE* և այլն (**տե՛ս ամսագրերի ցանկը**):

Ինչպե՞ս մուտք գործել.

Համալսարանի տարածքում. Գրադարանի համակարգիչների կամ «HayBusak Guest» WiFi-ի միջոցով (մուտքն ավտոմատ է՝ ըստ IP հասցեի):

Հեռավար (համալսարանից դուրս). Անհրաժեշտ է ստեղծել անձնական հաշիվ տվյալ շտեմարաններում՝ օգտագործելով համալսարանի ձեր պաշտոնական էլեկտրոնային հասցեն .....@haybusak.am:





Cambridge University Press

ԵՀՀ-ն բաժանորդագրվել է աշխարհի խոշորագույն և հեղինակավոր ակադեմիական հրատարակիչներից մեկի՝ Քեմբրիջի համալսարանի հրատարակչության (Cambridge University Press) «Cambridge Core» գիտական հարթակի բովանդակությունը: Հասանելի են ավելի քան 420 ակադեմիական բարձր հեղինակություն ունեցող գրախոսվող ամսագրեր, որոնք ներառում են գիտության տարբեր ճյուղեր (տնտեսագիտություն, բժշկություն, արվեստ և հումանիտար գիտություններ, իրավագիտություն, անգլերեն լեզվի դասավանդում, սոցիոլոգիա, ավիճակագրություն և հավանականություն, համակարգչային գիտություն, հոգեբանություն և այլն), ինչպես նաև բազմաթիվ գրքեր:

The EHU has subscribed to the content on "Cambridge Core"—the academic platform of Cambridge University Press, one of the world’s largest and most prestigious academic publishers. Access is now available to over 420 highly reputable, peer-reviewed academic journals covering a wide range of fields (economics, medicine, arts and humanities, law, English language teaching, sociology, statistics and probability, computer science, psychology, etc.), as well as numerous books.

JSTOR Archival Journals & Primary Sources Collection

Books at JSTOR | Flexible, Sustainable Ebook Access

ԵՀՀ-ն բաժանորդագրվել է JSTOR թվային գրադարանին: Այն ներառում է հումանիտար, սոցիալական գիտությունների եւ բնական գիտությունների ավելի քան 2600 լավագույն գիտական ամսագրերի ամբողջական թողարկումները մոտ 1200 հրատարակիչներից, ինչպես նաև հարյուրավոր առաջատար ակադեմիական եւ համալսարանական հրատարակիչների գիտական էլեկտրոնային գրքերի մեծ ընտրանի:

The YHU has subscribed to the JSTOR digital library. It includes the complete runs of over 2,600 top scholarly journals in the humanities, social sciences, and natural sciences from approximately 1,200 publishers, as well as a large selection of scholarly e-books from hundreds of leading academic and university presses.

THE ROYAL SOCIETY PUBLISHING

Royal Society Open Science | The Royal Society

Հավաքածուն ներառում է 8 բարձր հեղինակություն ունեցող գիտական հանդես՝ ֆիզիկական և կենսաբանական գիտությունների ոլորտներում: Բաժանորդներին հասանելի է Royal Society-ի թվային արխիվը, որը պարունակում է նյութեր սկսած 1665 թվականից: Նաև ներառում է 2 լիովին բաց մատչելիության ամսագրեր՝ Բաց կենսաբանություն և Թագավորական ընկերության բաց գիտություն: Թեմաներ՝ կենսաբանական գիտություններ, ֆիզիկական գիտություններ, մաթեմատիկական և ճարտարագիտական գիտություններ:

The collection includes 8 influential journals in physical and biological sciences and features the Royal Society's Digital Archive (since 1665). Also includes 2 fully Open Access journals: Open Biology and Royal Society Open Science.
Subjects covered: Biological sciences, physical sciences, mathematical & engineering sciences cross-disciplinary fields.

https://www.biologists.com/development/

https://www.biologists.com/journal-of-experimental-biology/

https://www.biologists.com/journal-of-cell-science/

Կենսաբանության տարբեր ոլորտների մասին բաց են երեք առաջատար ամսագրերը՝ Development, Journal of Cell Science, Journal of Experimental Biology, որոնք ներկայացնում են ոլորտի նորագույն հետազոտությունների մասին բազմաթիվ հետազոտություններ:

The company of Biologists have 3 journals about biology, that cover subjects- developmental biology, cell science, zoology, which present numerous studies on the latest research in the field.

Edward Elgar PUBLISHING

Development Studies & Environment e-books

Journals

https://www.elgaronline.com/page/Journals/journals

Elgaronline from Edward Elgar Publishing

Շտեմարանի հավաքածուներն ընդգրկում են 1382 անուն գիրք և 19 գրախոսվող գիտական ամսագիր՝ իրավագիտության, տնտեսագիտություն, ֆինանսների և կառավարման, շրջակա միջավայրի և այլ թեմաների շուրջ:

Collection includes 1382 books and 19 journals. Together with the e-books, the journals are hosted on the Edward Elgar Publishing content hosting platform, elgaronline. Subject coverage: law, economics, environment, management and leadership studies.

https://uk.sagepub.com/en-gb/eur/home

Ամսագրերի ժողովածուն պարունակում է միջազգային առաջատար հեղինակավոր ամսագրեր՝ բիզնեսի, հումանիտար, սոցիալական գիտությունների, տեխնոլոգիաների և բժշկության ոլորտներում: Հավաքածուն ներառում է ավելի քան 1000 վերնագիր և անընդհատ թարմացվում է նոր հանդեսներով:

Journals collection contains leading international peer-reviewed journals in a wide range of subject areas, including business, humanities, social science, technology and medicine. The Collection comprises over 1000 titles and it continuously updated with new journals.

eDuke JOURNALS
Scholarly Collections

https://read.dukeupress.edu/journals

Ամսագրերում հասանելի են հոդվածներ հետևյալ բնագավառներից՝ մարդաբանություն, արվեստի և արվեստի պատմություն, տնտեսագիտություն, կրթություն, բնապահպանական հումանիտար գիտություններ, ազգագրագիտություն, պոեզիա, կինո, գենդերային ուսումնասիրություններ, սոցիոլոգիա և այլն:

The journals feature articles in the following fields: anthropology, art and art history, economics, education, environmental humanities, ethnography, poetry, film, gender studies, sociology, and more.

EUROPEAN RESPIRATORY *journal*

OFFICIAL SCIENTIFIC JOURNAL OF THE ERS

https://erj.ersjournals.com/

Ամսագիրը հրատարակում է կլինիկական և փորձարարական աշխատանքներ, որոնք վերաբերում են մեծահասակների և մանկական շնչառական բժշկության բոլոր ասպեկտներին:

The journal publishes clinical and experimental research by top scientists. Scope includes: Adult & pediatric respiratory medicine, cell biology, epidemiology, immunology, oncology, pathophysiology, imaging, occupational & intensive care medicine, sleep medicine, thoracic surgery.

IWA PUBLISHING

iwaponline.com/journals

Էկոլոգիայի և բնագիտության ոլորտի ամսագրերի հավաքածուն հրատարակում է մեծամասամբ անգլերեն, ինչպես նաև իսպաներեն ամսագրեր, որոնց ցանկն անընդհատ թարմացվում է:

Ecological collection of 10 open access journals that have subject coverage of water, wastewater and related environmental fields.

https://journals.openedition.org/?lang=en

Հումանիտար և սոցիալական գիտությունների 175 միջազգային ամսագրեր բաց են տարբեր ֆորմատներով տարբեր էլեկտրոնային կրիչների համար: Հրատարակությունների 80%-ը ֆրանսերեն են, կան նաև անգլերեն, իսպաներեն, իտալերեն, գերմաներեն, պորտուգալերեն:

It is a bundle of 175 journals in the Humanities and Social Sciences, published by university presses and small academic publishers. About 80% of the publications are in French. Other main languages are English, Spanish, Italian and Portuguese.

https://msp.org/publications/journals/

MSP ամսագրերի հավաքածուն ներառում է մաթեմատիկայի և հարակից գիտությունների 17 վերանայված ամսագիր, որոնք ներառում են նյութեր մաթեմատիկա, մեխանիկա և ճարտարագիտություն ուղղություններով:

MSP collection currently includes 17 peer reviewed journals in mathematics and related sciences. New titles will be automatically added to the collection.Subject coverage-mathematics, mechanics & engineering.

https://dl.acm.org/

The Association for Computing Machinery (ACM) շնորհիվ հասանելի են տեղեկատվական տեխնոլոգիաներ, ծրագրային ապահովում, տվյալների բազայի համակարգեր, կիբերանվտանգություն, արհեստական բանականություն, ինտերնետ և հարակից թեմաներով նյութեր:

The Association for Computing Machinery (ACM) provides access to information technology, software, database systems, cybersecurity, artificial intelligence, the Internet, mobile, and multimedia technologies.

https://uk.sagepub.com/en-gb/eur/imeche

Այս ամսագրերը ընդգրկում են մեքենաշինության բոլոր ոլորտները, թեմաների լայն շրջանակով՝ սկսած էներգետիկայից մինչև սպորտային ճարտարագիտություն և տեխնոլոգիա: Դրանք հանդիսանում են անհրաժեշտ մաս ցանկացած ինժեներական հավաքածուի համար:

The IMechE Journals collection, published by SAGE, includes 18 titles from the Institution of Mechanical Engineers. Covering content from 1847 to the present, these journals focus on specific areas of mechanical engineering, providing in-depth coverage across the entire discipline.